

այն մասերը, որ Չամբուլ վարիանտում չկան, կամ տարբեր են պատմուած: Այսպիսով տեսնում ենք, որ ընդունուած կարծիքի հակառակ՝ գաղթական Ռուսաստանը մէջ ևս կան ժողովրդական բանասիրութեան նշանաւոր մնացորդներ:

Աբարանի բարբառը Մշոյ բարբառի մի ստորաբաժինն է, ընդհանուր բարբառների մէջ արեւմտեան բարբառների շարքում պիտի գտնուէ իւր հնչման և քերականական կազմութեան պատճառով: Ուշագրութեան արժանի է այս բարբառի մեծ նմանութիւնը գրաբարի հետ. մեր հին լեզուի ծագումը բոլորովին պարզուած չէ. եթէ Աբարատեան և Մշոյ բարբառները համեմատենք գրաբարի հետ, աւելի սերտութիւն դէպի վերջինն ենք նկատում:

Մոկաց բարբառով մեր գրած վարիանտները, երգերը, աւանդութիւնները¹⁾ գրի ենք առել պանդուխտ Մոկացիներից. թէև լեզուի մաքրութեան մասին մեր ընթերցողներին երաշխաւորել չենք կարող, բայց ձշտիւ արձանագրելու համար արել ենք այն, ինչ որ կարող էինք: Երգերի լեզուն իհարկէ անհամեմատ աւելի մաքուր է, նախ՝ իբրև ոտանաւոր՝ աւելի անփոփոխ է մնացած, երկրորդ՝ որ երգեր ասող Մոկացու լեզուն համեմատութեամբ աւելի ազատ էր մնացած աղբեցութիւնից:

Մի քանի խօսք ևս վէպի «Սասմայ Ծռեր» կոչման մասին: «Սասունցի Գաւիթ կամ Մհերի Գուռ» և «Գաւիթ և Մհեր» վերնագիրն ամբողջապէս չի արտայայտում վէպի բովանդակութիւնը, որովհետև բացի Գաւիթից և Մհերից վէպի մէջ կան և ուրիշ գործող գլխաւոր հերոսներ (Սանասար, Ասլիմելիք և ուրիշները): Այդ ինկատի ունենալով՝ մենք աւելի յարմար ենք գտնում այդ վէպը մի ընդհանուր վերնագրով անուանել «Սասմայ Ծռեր», որ նշանակում է «Սասունի Գժեր»: Այդ կոչումը գեղեցիկ ու արտայայտիչ և միանգամայն ժողովրդական է, որովհետև Սասմայ

¹⁾ Երգերը, աւանդութիւնները, հեքիաթները և բառարանը կրկնակէս մի առանձին հատոր: